Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-558[7]-10.04.2023-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հիմնադրամների մասին» 2002 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-516-Ն օրենքի 4-րդ հոդվածում՝

1. վերնագրում «շահառուները» բառից հետո լրացնել «, կամավորները» կետադրական նշանով եւ բառով.

2. լրացնել նոր՝ 5-րդ մասով հետեւյալ բովանդակությամբ.

«5. Հիմնադրամը կարող է իր աշխատանքներում ներգրավել կամավորների՝ օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից երեք ամիս հետո: